

իրականացումը: Մասնավորապես, նպատակահարմար կլիներ ՓՄՁ սուբյեկտների կողմից լիցենզավորման ենթակա գործունեությամբ զբաղվելու համար լիցենզիաներ տրամադրել պարզ ընթացակարգով, բացառությամբ օրենքով սահմանված այն դեպքերի, երբ տվյալ տնտեսավարող սուբյեկտը (կախված իր գործունեության ոլորտից կամ անկախ դրանից) չի կարող համարվել ՓՄՁ սուբյեկտ, անգամ եթե այն համապատասխանում է ՓՄՁ սուբյեկտների որոշման հայտանիշ համարվող աշխատողների կամ աշխատատեղերի սահմանային թվաքանակին: Ընդ որում, պարզ ընթացակարգով լիցենզիա ստացած տնտեսավարող սուբյեկտն իր ՓՄՁ սուբյեկտի կարգավիճակը պետք է պահպանի լիցենզավորման ենթակա գործունեության իրականացման ողջ ժամանակահատվածում, հակառակ պարագայում նա զրկվում է լիցենզիայից և վճարում օրենսդրությամբ սահմանված չափով տուգանք՝ նշված պայմանը խախտելու համար:

Վերոհիշյալ համատեքստում հիմնավորված կլիներ նաև կրկնակի կրճատել նոր ստեղծվող ՓՄՁ սուբյեկտների պետական գրանցման և դրանց գործունեության լիցենզավորման համար վճարվող պետական տուրքի գործող չափերը, ինչը, անշուշտ էականորեն չի ազդի պետական բյուջեի եկամտային մասի վրա, սակայն նշանակալիորեն կխրախուսի ՓՄՁ սուբյեկտների և հատկապես փոքր, այդ թվում՝ գերփոքր ձեռնարկատիրության սուբյեկտների ստեղծման և գործունեության ծավալման գործընթացները:

ՄԱՆՈՒԿ ՊԵՏՐՈՍՅԱՆ

ՀՊԱՀ Ֆինանսներ և վարկ ամբիոնի ասիստենտ

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՄԻՋՈՑՈՎ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՎԱՐԿԱՎՈՐՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՅԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

Շուկայական տնտեսության անցման գործընթացում ՀՀ-ում ակնկալվում էր, որ տնտեսավարման նոր պայմաններին համահունչ տնտեսավարող սուբյեկտների գործունեության համար անհրաժեշտ ֆինանսական ռեսուրսների հիմնական աղբյուր կդառնան իրենց սեփական միջոցները, իսկ դրանց պակասի դեպքում նրանք կարող էին դիմել առևտրային բանկերին, ունիվերսալ վարկային կազմակերպություններին՝ ակնկալելով դրամական միջոցներ՝ վերադարձելիության և առևտրային սկզբունքներով: Սակայն գյուղացիական տնտեսությունների և այլ արտադրական կազմակերպությունների ցածր եկամտաբերությունը հնարավորություն չընձեռեց վերարտադրության գործընթացը կազմակերպել սեփական միջոցների հաշվին, իսկ առևտրային բանկերի վարկային միջոցներն անհասանելի դարձան գյուղացիական տնտեսությունների մեծ մասի համար:

1990-ական թվականներին ՀՀ ՀՆԱ-ում գյուղատնտեսության մասնաբաժինն ավելացավ՝ հասնելով 40%-ի¹: Ներկայումս նրա տեսակարար կշիռը կազմում է 13.8%, իսկ ամբողջ ագրոպարենային համակարգում ձևավորված արդյունքի տեսակարար կշիռը ՀՆԱ-ում կազմում է 21.9%²: Ներկայումս Հայաստանի գյուղատնտեսությունը բավականաչափ աղքատ ոլորտ է, իր գոյատևմանն ուղղված վարչաօրհամայական տնտեսությունից անցումային փուլում գտնվող ոլորտի դասական օրինակ: Հարկ ենք համարում նշել այն կարևոր հանգամանքը, որ ֆերմերների մի

¹ «Գյուղական տարածքների տնտեսական զարգացման ծրագիր», Գյուղատնտեսության զարգացման միջազգային հիմնադրամ, Հայաստանի Հանրապետություն, 2004 թվական:

² «Հայաստանի գյուղատնտեսությունը», Երևան, 2008 թվական:

ստվար խումբ չունի համապատասխան գիտելիքներ կամ ունակություններ և ագրարային ոլորտ է ներթափանցել անպատրաստ: Ասվածն ապացուցվում է նրանով, որ

առ այսօր դաշտավարության և անասնապահության ցածր որակը պայմանավորված է ոչ որակյալ սերմերի և տնկանյութերի ընտրությամբ, պարարտանյութերի և թունաքիմիկատների անբավարար օգտագործմամբ, բույսերի պաշտպանության և սանիտարիայի բացակայությամբ,

ֆերմերային տնտեսությունների փոքր չափերն ու անձնական սպառմանն ուղղված արտադրությունը կարող են բերել տարածաշրջանի համար այնքան էլ ոչ նպաստավոր պայմաններ մշակաբույսերի աճեցման համար, ինչն էլ կհանգեցնի եկամուտների բավարար չափով չստացմանը և հողի ու արտադրարարի ոչնչացմանը,

տեխնոլոգիան և ենթակառուցվածքները (օրինակ՝ մեխանիզմն ու ոռոգման համակարգը), որոնք ժառանգվել են անցումային շրջանում, հաճախ նպատակահարմար չեն որակի պահպանման ու ծառայությունների մատուցման առումով, և վերջնական արդյունքում դրանք հանգեցնում են անխնայողականության, շրջակա միջավայրի աղտոտման և կորուստների պատճառման,

անգամ այսօր առկա է անհրաժեշտ տեղեկատվության պակասը, բացակայում են այնպիսի կառույցներ ու մեխանիզմներ, որոնք անհրաժեշտ են՝ շուկայական տնտեսավարման անցումային փուլում հաջող գործունեություն իրականացնելու համար: Հատկապես դրանք կարևորում են ագրոքիզնեսը մատակարարման, տեխնիկական ու սպասարկման ոլորտներում:

Ինչպես հայտնի է, ագրոքիզնեսը միջոցների շրջանառության մակարդակով եկամտաբերության տեսանկյունից դեռևս զիջում է այլ ոլորտներին, քանի որ այստեղ արտադրական գործընթացի վրա մեծ ազդեցություն ունեն բնակլիմայական պայմաններն ու սեզոնայնությունը: Այս ամենի արդյունքում առևտրային բանկերը և վարկավորմամբ զբաղվող տարբեր վարկային կազմակերպությունները ձեռնպահ են մնում այս ոլորտի վարկավորումից: Սակայն 2007 թվականի ընթացքում գյուղատնտեսությունում իրականացրած վարկային ներդրումների առումով առաջատար է համարվում «ԱԿԲԱ-Կրեդիտ-Ագրիկոլ-Բանկ» ՓԲԸ-ն, որի ընդհանուր վարկային ներդրումների կառուցվածքում գյուղատնտեսության մասնաբաժինը կազմում է 28,27 %: Վերջինս պայմանավորված է բանկի ռազմավարական քաղաքականությամբ, և համեմատության համար նպատակահարմար ենք գտնում նշել, որ թեև արդյունաբերության և շինարարության բնագավառներում առաջատար է համարվում «Արդշինինվեստբանկ» ՓԲԸ-ն, որի վարկային ներդրումները վերը նշված ոլորտներում կազմում են համապատասխանաբար 13.606.088,0 և 4.986.304,0 հազ. դրամ, գյուղատնտեսության ոլորտում զիջում է առաջատարին: «Արդշինինվեստբանկ» ՓԲԸ-ի վարկային ներդրումները գյուղատնտեսությունում կազմել են 1.925.521,0 հազ. դրամ: Այս հանգամանքը հիմնականում պայմանավորված է նրանով, որ գյուղատնտեսության ոլորտը ռիսկայնության մակարդակով բարձր է, և ավելի շատ տոկոսային եկամուտ ակնկալելու առումով ֆինանսավորում են տնտեսության այլ ճյուղեր:

Ավելի հստակ պատկերացում ունենալու համար աղյուսակի տեսքով ներկայացնենք ՀՀ առևտրային բանկերի կողմից տրամադրվող վարկերը գյուղատնտեսության ոլորտին:

Գյուղատնտեսության վարկավորման գործընթացին աջակցելու նպատակով ֆինանսների նախարարության հովանու ներքո 2005 թվականին ստեղծվել է Գյուղական ֆինանսավորման կառույց (ԳՖԿ) ծրագրերի իրականացման գրասենյակը, որի առաքելությունն է ուղղորդել և կառավարել Գյուղատնտեսության զարգացման միջազգային հիմնադրամի «Գյուղական տարածքների տնտեսական զարգացման ծրագրի» (ԳՏՏՁԾ) և Միջազգային զարգացման ընկերակցության «Գյուղական ձեռնարկատիրության և փոքրածավալ առևտրային գյուղատնտեսության զարգացման ծրագրի» (ԳՉՓԱԳՁԾ) շրջանակներում նախատեսված վարկային միջոցները:

Վարկային բանկերի վարկային ներդրումներն առ 31.12.2007 թվական, հազ. դրամ¹

№	ԲԱՆԿ	Վարկային ներդրումներ		
		Ընդամենը	Գյուղատնտեսություն	Տեսակարար կշիռ, %
1.	ԱԿԲԱ Կրեդի Ագրիկոլ	55681630	15743924	28,27
2.	Արդշինինվեստբանկ	54671230	1925521	3,52
3.	ԷյՋ-Էս-Բի-Սի բանկ Հայաստան	51557287	566883	1,10
4.	ՎՏԲ բանկ Հայաստան	40285980	1424773	3,54
5.	Յունիբանկ	29412332	129151	0,44
6.	Կոմվերսբանկ	28947989	310639	1,07
7.	Հայէկոնոմբանկ	28486724	7436	0,03
8.	Ինեսկոբանկ	20827632	588400	2,83
9.	Անելիք բանկ	16122652	212464	1,32
10.	Հայբիզնեսբանկ	15981683	133984	0,84
11.	Արցախբանկ	12938292	916632	7,08
12.	ԲՏԱ Ինվեստբանկ	12130452	28669	0,24
13.	Առէկսիմբանկ	10065245	63533	0,63
14.	Արարատ բանկ	9253264	128048	1,38
15.	ԱրմՍվուիսբանկ	7217815	0	0,00
16.	Պրոմեթեյ բանկ	6451069	7832	0,12
17.	Հայկական զարգացման բանկ	6282564	23492	0,37
18.	Կասկադ բանկ	4319184	161130	3,73
19.	Մելաք բանկ	3005533	0	0,00
20.	Արմինպրեսբանկ	2749367	0	0,00
21.	Բիբլիոս բանկ Հայաստան	2555023	0	0,00
ԸՆԴԱՄԵՆԸ		418942947	22372511	5,34

2007 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ այս կառույցի կողմից տեղաբաշխված վարկերի թիվը կազմել է 186, որից ԳՏՏԶԾ-ի շրջանակներում՝ 120, իսկ ԳԶՓԱԳԶԾ-ի շրջանակներում՝ 66: Վարկային միջոցները ԳՖԿ-ն տեղաբաշխում է «Մասնակից ֆինանսական կառույց» (ՄՖԿ) բանկերի միջոցով: ԳՖԿ-ն վարկավորում է ՄՖԿ բանկերի կողմից ներկայացված հայտերը՝ հիմնվելով պոտենցիալ վարկառուների կողմից ներկայացված գործարար ծրագրերի վրա: ԳՖԿ-ի պահանջով հայտերը, հետևաբար գործարար ծրագրերը, պետք է պարունակեն շահառուի համաֆինանսավորման մասնաբաժին:

¹ "ACTIVITY INDICATORS OF BANKS OF ARMENIA", IV QUARTER 2007, Financial-economic bulletin issued by ARKA NEWS AGENCY, 31 January 2008.

**ԳՖԿ-ի կողմից վարկավորված հայտերի գործարար ծրագրերի
ֆինանսավորման համամասնությունները (ԱՄՆ դոլար)**

Ծրագրեր	2006-ին տեղաբաշխված			2007-ին տեղաբաշխված			Ընդամենը		
	Գործարար ծրագրերի արժեք	Շահառուի համաֆինանսավորում	ԳՖԿ վարկի մասնաբաժին	Գործարար ծրագրերի արժեք	Շահառուի համաֆինանսավորում	ԳՖԿ վարկի մասնաբաժին	Գործարար ծրագրերի արժեք	Շահառուի համաֆինանսավորում	ԳՖԿ վարկի մասնաբաժին
ԳՏՏԶ	8303398	4111522	50,48	3521158	1143658	67,52	11824556	5255180	55,56
ԳՉՓԱԳՉ	-	-	-	3139920	1041153	66,84	3139920	1041153	66,84
ԸՆԴԱՄԵՆԸ	8303398	4111522	50,48	6661078	2184811	67,20	14964476	6296333	57,92

Ընդհանուր առմամբ ԳՖԿ-ի կողմից վարկավորված հայտերի գործարար ծրագրերի ֆինանսավորման համամասնությունները ներկայացված են աղյուսակ 2-ում:

Ինչպես երևում է աղյուսակից, գործարար ծրագրերը ֆինանսավորվել են շահառուների և ԳՖԿ-ի կողմից: Շահառու նշանակում է որևէ ֆիզիկական անձ, անհատ ձեռներեց կամ իրավաբանական անձ, որը ներգրավված է կամ մտադրություն ունի ներգրավվել ընդունելի տարածքում որևէ գյուղատնտեսական գործունեության մեջ (ենթավարկի կամ լիզինգային գործառնության միջոցով), ներառյալ՝ վերանշակում, մարքեթինգ, վարձակալություն, առևտուր, ծառայություններ և արտադրական գործունեություններ, որոնք գրանցված են՝ համաձայն փոխառուի օրենքներին և որոնց ՄՖԿ-ն առաջարկում է կամ առաջարկել է ենթավարկ կամ լիզինգային գործառնություն: ԳՏՏԶ-ի գործարար ծրագրերի արժեքը նվազել է, սակայն ԳՖԿ-ի կողմից ծրագրի ֆինանսավորման չափաբաժինն աճել է: Ընդհանուր առմամբ երկու ծրագրերի միջոցով ԳՖԿ-ի կողմից տեղաբաշխվել է 8.668.143 ԱՄՆ դոլար:

ԳՏՏԶ-ով ԳՖԿ-ի մասնակից ֆինանսական կառույցները թվով ութն են, իսկ ԳՉՓԱԳՉ-ով՝ չորս բանկեր: Ավածն ավելի պարզ պատկերացնելու համար կազմենք աղյուսակ, որտեղ բերված են այն բոլոր բանկերը, որոնք համագործակցում են ԳՖԿ-ի հետ և նրանց կողմից ներկայացված գործարար ծրագրերը: Աղյուսակի տվյալներից երևում է, որ տեղաբաշխված վարկերի քանակով առաջատար է «Արդշինինվեստբանկ» ՓԲԸ-ն, որը ԳՖԿ-ից ստացել է 1.944.876 ԱՄՆ դոլար ընդհանուր արժողությամբ թվով 89 վարկ, որը տեղաբաշխված վարկերի 47,8%-ն է: Սակայն վարկի գումարի չափով առավելագույն քանակությամբ վարկ է տեղաբաշխել «Ինեսկոբանկ» ՓԲԸ-ն, ինչը կազմում է ԳՖԿ ընդհանուր վարկերի մոտ 33,3%-ը, և գործարար ծրագրերի արժեքով տվյալ բանկը առաջատար դիրքում է ու այն կազմում է 4.924.956 ԱՄՆ դոլար:

Գործարար ծրագրերի արժեքով առավել փոքր մասնակցություն է ցուցաբերել «Առեքսիմբանկ» ՓԲԸ-ն, որը միայն 2007 թվականին մասնակցել է ԳՏՏԶ-ով վարկային միջոցների տեղաբաշխման գործընթացին՝ կատարելով թվով 1 վարկային ներդրում՝ 35000 ԱՄՆ դոլար ընդհանուր արժողությամբ:

Բանկերի ընտրությունը կատարվում է ԳՖԿ-ի կողմից, իսկ ՄՖԿ դառնալու համար շահագրգռված ֆինանսական հաստատությունները պետք է համապատասխանեն ֆինանսական ու կառավարման մի շարք չափանիշերի և ունենան կնքված համաձայնագիր ԳՖԿ-ի հետ:

ԳՖԿ-ի կողմից վարկերի տեղաբաշխումն ըստ բանկերի (ԱՄՆ դոլար)

№	Առևտրային բանկերի անվանումը	Գործարար ծրագրերի արժեք	ԳՖԿ վարկ		
			թվա-բանակը	արժեքը	վարկի միջին արժեք
1.	Ինեկոբանկ	4924956	38	2892000	76105
2.	ԱԿԲԱ-կրեդիտ-ագրիկոլ-բանկ	2111970	19	1298000	68316
3.	Արդշինինվեստբանկ	3224233	89	1944876	21853
4.	Կոմվերսբանկ	1158708	8	696500	87063
5.	Յունիբանկ	1306203	8	605000	75625
6.	Անելիք բանկ	1331851	16	754767	47173
7.	Առէկսիմբանկ	87723	1	35000	35000
8.	Հայբիզնեսբանկ	606305	7	448000	64000
ԸՆԴԱՄԵՆԸ		14751949	186	8674143	-

ԳՖԿ-ն «Ձարգացման միջազգային ընկերակցության» հետ միասին պետք է ուսումնասիրի յուրաքանչյուր պոտենցիալ ՄՖԿ-ի՝ հատուկ ուշադրություն դարձնելով նրանց ընդհանուր վարկավորման կարողություններին, ինչպես նաև ֆինանսական դրությանը և ներդրումային պորտֆելի իրականացմանը: ՄՖԿ-ն պետք է ունենա ֆինանսական և կառավարման ընդունելի կառուցվածք, բավարար չափով կապիտալ, ապահովի ակտիվների որակ և վարկավորման բավարար պայմաններ, համապատասխան իրացվելիություն, գործառնություններն արդյունավետ կազմակերպելու համար անհրաժեշտ կազմակերպչական, կառավարման և տեխնիկական ունակություններ, որակյալ աշխատակազմ և այլ ռեսուրսներ:

ԳՖԿ-ի և ՄՖԿ-ների միջև վերաֆինանսավորման գործառնությունների պայմաններն ու դրույթները սահմանվում են նրանց միջև կնքված համաձայնագրերով: Ենթածրագրերի այն ենթավարկերը կամ լիզինգային փոխառությունները, որոնց տևողությունը 18 ամսից ավելի են, կարող են ֆինանսավորվել ԳՖԿ-ի կողմից մինչև 100%-ի սահմաններում, իսկ որոնց տևողությունը մինչև 18 ամիսը ներառյալ է, կարող են ֆինանսավորվել մինչև 70%-ի սահմաններում, իսկ մնացած ենթավարկի առնվազն 30%-ը պետք է ֆինանսավորվի ՄՖԿ-ի սեփական միջոցների հաշվին: Միաժամանակ ենթավարկերի մասնաբաժինը չպետք է գերազանցի ընդհանուր վարկային պորտֆելի 30%-ը «Գյուղատնտեսության զարգացման միջազգային հիմնադրամի» միջոցների դեպքում, և 20%-ը՝ «Ձարգացման Միջազգային Ընկերակցության» միջոցների դեպքում: ԳՖԿ-ի կողմից մեկ փոխառուին, ինչպես նաև, համաձայն ՀՀ բանկային օրենսդրության, նրա հետ փոխկապակցված անձանց տրամադրվող ենթավարկի առավելագույն չափը չպետք է գերազանցի 150.000 ԱՄՆ դոլար համարժեքով:

Վարկառուների կողմից ենթավարկերի և լիզինգային փոխառությունների վճարման ժամանակացույցերը պետք է հիմնվեն նախօրոք կանխատեսված դրամական հոսքերի վրա, իսկ արտոնյալ ժամկետը կարող է լինել ըստ պահանջի և այն չափով, որը պարտադիր պետք է հիմնավորվի: Ենթավարկերի և լիզինգային փոխառությունների վերադարձելիության ժամկետը չպետք է գերազանցի ֆինանսավորվող ներդրման շահագործման ժամկետը և կարող է լինել առավելագույնը յոթ տարի: ԳՖԿ-ի կողմից վերաֆինանսավորվող ենթավարկերի արտոնյալ առավելագույն ժամկետը կարող է լինել 18 ամիս, այն դեպքում, եթե ֆինանսավորումը կատարվում է ԳՋՄՀ-ի միջոցներից, իսկ ՋՄՀ-ի միջոցներից ֆինանսավորման դեպքում արտոնյալ ժամկետի սահմանափակում չկա:

ՄՖԿ-ն պետք է փոխառության դիմաց վճարի տոկոսներ սահմանված տոկոսադրույքով, որի հաշվարկը կատարվում է ՄՖԿ-ի կողմից ստացված ու չվճարված փոխառության նկատ-

մամբ, իսկ ԳՖԿ-ն անմիջապես պետք է տեղեկացնի ՄՖԿ-ին անմիջապես վճարվող տոկոսադրույքի մասին: Տոկոսադրույքները պետք է վերանայվեն կիսամյակային կտրվածքով՝ յուրաքանչյուր տարվա փետրվարի 1-ին ու օգոստոսի 1-ին, և սահմանվեն այդ ամսաթվերի միջև ընկած վեց ամիս ժամանակահատվածի համար:

Տրամադրված վարկերի տոկոսադրույքներն ըստ բանկերի ներկայացված են աղյուսակ 4-ում: Աղյուսակի տվյալներից հստակ երևում է, որ գյուղատնտեսության ոլորտում տեղաբաշխված վարկերի միջին տոկոսադրույքը վերջին երկու տարիներին կազմել է 11.9%: Այս ցուցանիշը համեմատաբար նպաստավոր է գյուղացիական տնտեսությունների համար, քանի որ նրանց առկա դրամական միջոցների և առհասարակ դրամական հոսքերի պայմաններում կարծում ենք, որ հնարավոր կլինի, վարկը նպատակային օգտագործելով, ընդլայնել տնտեսությունը կամ բավարարել ընթացիկ ակտիվների պահանջը՝ տնտեսության գործընթացն ապահովելու համար: Ամենացածր տոկոսադրույքով՝ 9.8%, վարկեր տեղաբաշխել է միայն «Արդշինինվեստբանկ» ՓԲԸ-ն, ընդ որում՝ միայն 2006 թվականին, իսկ ընդհանուր առմամբ բանկը տեղաբաշխել է 1.304.976 ԱՄՆ դոլարի վարկեր, որը կազմել է 2006 թվականին, իսկ ԳՏՏՁԾ-ի շրջանակներում իրականացված ընդհանուր վարկային ներդրումների 31.1%-ը:

2006 թվականին ԳՏՏՁԾ-ի շրջանակներում վարկերը տեղաբաշխվել են վեց բանկերի միջոցով, և ամենամեծ արժողությամբ վարկեր տեղաբաշխվել են տարեկան 10% տոկոսադրույքով, ինչը կազմել է 1.495.000 ԱՄՆ դոլար կամ ընդհանուր գումարում ներդրումների 35.7%-ը: Նույն ծրագրի շրջանակներում 2007 թվականին ամենաշատ վարկեր տեղաբաշխվել են տարեկան 12% տոկոսադրույքով, ինչը կազմել է 2007 թվականին ԳՏՏՁԾ-ի շրջանակներում կատարված վարկային ներդրումների 53%-ը: Բացի այդ 2007 թվականին մեկ իրականացվել են վարկային ներդրումներ ԳՉՓԱԳՁԾ-ի շրջանակներում: Այս ծրագրին մասնակցություն է ցուցաբերել թվով չորս առևտրային բանկ, և ընդհանուր առմամբ իրականացվել են 2.098.767 ԱՄՆ դոլարի վարկային ներդրումներ: Այստեղ ամենաշատ վարկեր տրամադրվել են մույնպես տարեկան 12% տոկոսադրույքով, ինչն էլ կազմել է 1.022.000 ԱՄՆ դոլար կամ ընդհանուր վարկային ներդրումների 48.7%-ը: Ինչպես երևում է աղյուսակից, 2007 թվականին վարկի առավել նպաստավոր տոկոսադրույքը կազմել է տարեկան 12%, ինչը 2006-ի համեմատ ունի աճի միտում:

Աղյուսակ 4

ԳՖԿ-ի կողմից 2006 և 2007թթ. տեղաբաշխված տվյալ տոկոսադրույքով վարկերի գումարն ըստ ծրագրին մասնակցող բանկերի (ԱՄՆ դոլար)

№	Վարկի տոկոսադրույք	Ինեսկոբանկ	ԱԿԲԱ Կրեդիտ Ագրիկոլ	Արդշինինվեստբանկ	Կոմվերսբանկ	Անելք բանկ	Յունիբանկ	Առեկսինբանկ	Հայֆինանսբանկ	Ընդամենը	Տեսականորեն կշիռ %
ԳՏՏՁԾ 2006-ին տեղաբաշխված											
1.	9.8	-	-	1304976	-	-	-	-	-	1304976	31,1
2.	10.0	800000	-	-	330000	-	365000	-	-	1495000	35,7
3.	12.0	-	690000	-	-	270000	-	-	-	960000	22,9
4.	13.0	-	-	168900	-	-	-	-	-	168900	4,0
5.	14.0	15000	175000	-	-	-	-	-	-	190000	4,5
6.	15.0	-	25000	-	-	-	-	-	-	25000	0,6
7.	16.0	-	48000	-	-	-	-	-	-	48000	1,1
ԸՆԴԱՄԵՆԸ		815000	938000	1473876	330000	270000	365000	-	-	4191876	100,0

№	Վարկի տոկոսադրույք	Ինքնուրույն	ԱԿԲԱ Կրեդիտ Ազիկով	Արդշինին-վետարան	Կոնվերտացիայի	Անելիք բանկ	Ֆունդի	Առեկտիվային	Հարկիզմեմբան	Ընդամենը	Տեսակարար կշիռ %
ԳՏՏՁԾ 2007-ին տեղաբաշխված											
1.	10.0	-	-	15000	366500	-	150000	-	-	531500	22,4
2.	11.0	-	-	-	-	-	-	-	448000	448000	18,8
3.	12.0	925000	210000	-	-	-	90000	35000	-	1260000	53,0
4.	13.0	-	-	138000	-	-	-	-	-	138000	5,8
ԸՆԴԱՄԵՆԸ		925000	210000	153000	366500	-	240000	35000	448000	2377500	100,0
ԳՉՓԱԳՁԾ 2007-ին տեղաբաշխված											
1.	10.0	-	-	-	312000	-	-	-	-	312000	14,87
2.	11.0	140000	-	-	-	-	-	-	-	140000	6,67
3.	12.0	1012000	-	-	-	10000	-	-	-	1022000	48,70
4.	13.0	-	-	-	-	427312	-	-	-	427312	20,36
5.	14.0	-	150000	-	-	47455	-	-	-	197455	9,41
ԸՆԴԱՄԵՆԸ		1152000	150000	-	312000	484767	-	-	-	2098767	100,0

Կարծում ենք, որ սա մեկնաբանվում է նրանով, որ 2007 թվականին իրականացվել են համատեղ երկու ծրագրեր, չնայած սա չի կարելի միանշանակ միակ հիմնավորումը համարել, քանի որ 2006 թվականին իրականացված վարկային ներդրումները կազմել են 4.191.876, իսկ 2007-ին՝ 4.476.267 ԱՄՆ դոլար:

ԳՖԿ վարկերի տեղաբաշխումն ըստ մարզերի մույնպես հատուկ ուսումնասիրության է արժանի, և այդ նպատակով կազմել ենք աղյուսակ, որտեղ ներկայացված է ԳՏՏՁԾ-ի և ԳՉՓԱԳՁԾ-ի շրջանակներում տեղաբաշխված վարկային ներդրումների ուսումնասիրությունը, ընդ որում Աղյուսակ 5.1-ում ներկայացված են ԳՏՏՁԾ-ով իրականացված վարկային ներդրումները, իսկ Աղյուսակ 5.2-ում՝ ԳՉՓԱԳՁԾ-ով, ԳՏՏՁԾ-ով իրականացված վարկային ներդրումները:

Ընդհանուր առմամբ վարկեր տեղաբաշխվել են հանրապետության բոլոր մարզերում՝ ԳՏՏՁԾ-ի շրջանակներում թվով ութ (Արագածոտն, Գեղարքունիք, Լոռի, Սյունիք, Տավուշ, Վայոց Ձոր, Շիրակ) և ԳՉՓԱԳՁԾ-ի շրջանակներում թվով չորս մարզերում (Արարատ, Արմավիր, Լոռի, Կոտայք), ներառյալ նաև Երևանը: Ինչպես երևում է աղյուսակից, երկու ծրագրերով վարկային ներդրումներ իրականացվել են միայն Լոռու մարզում, ընդ որում ընդհանուր վարկերի քանակն այս մարզում կազմել է թվով 23, իսկ վարկերի ընդհանուր գումարը՝ 1.393.900 ԱՄՆ դոլար: Ընդամենը վարկերի քանակով առաջատար է Վայոց Ձորի մարզը, որտեղ տրամադրված վարկերի քանակը կազմել է 40:

ԳՖԿ-ի կողմից տեղաբաշխված վարկերն ըստ մարզերի, ԱՄՆ դոլար /ԳՏՏՁԾ/

	Արագածոտն	Գեղարքունիք	Լոռի	Սյունիք	Տավուշ	Վայոց ձոր	Շիրակ
Տեղաբաշխված 2006-ին							
Վարկերի քանակը	22	27	12	13	6	32	8
Վարկերի ընդհանուր գումարը	655200	496450	524400	506500	337960	1101366	570000
Գործարար ծրագրերի ընդհանուր արժեքը	1294603	959224	998486	978453	575686	1849482	1478064
Միավոր վարկի միջին արժեքը	29782	18387	43700	38962	56327	34418	71250
2007-ին տեղաբաշխված							
Վարկերի քանակը	12	5	10	1	-	8	1
Վարկերի ընդհանուր գումարը	628000	375000	864500	10000	-	430000	70000
Գործարար ծրագրերի ընդհանուր արժեքը	843714	499900	1303567	18000	-	725777	87500
Միավոր վարկի միջին արժեքը	52333	75000	86450	10000	-	53750	70000
Ընդամենը							
Վարկերի քանակը	34	32	22	14	6	40	9
Վարկերի ընդհանուր գումարը	1283200	871450	1388900	516500	337960	1531366	640000
Գործարար ծրագրերի ընդհանուր արժեքը	2138317	1459124	2302053	996453	575686	2575259	1565564
Միավոր վարկի միջին արժեքը	37741	27233	63132	36893	56327	38284	71111

ԳՖԿ-ի կողմից տեղաբաշխված վարկերն ըստ մարզերի, ԱՄՆ դոլար /ԳՉՓԱԳՉԾ/

	Արարատ	Արմավիր	Լոռի	Կոտայք	Երևան
Տեղաբաշխված 2007-ին					
Վարկերի քանակը	5	11	1	11	1
Վարկերի ընդհանուր գումարը	317000	801030	5000	965797	9940
Գործարար ծրագրերի ընդհանուր արժեքը	421360	1291394	5600	1403336	17640
Միավոր վարկի միջին արժեքը	63400	72821	5000	87800	9940

Ուսումնասիրությունների արդյունքում հանգել ենք այն եզրակացության, որ Հայաստանի Հանրապետությունում դեռևս ամբողջությամբ չի բավարարվում գյուղատնտեսական վարկերի նկատմամբ պահանջարկը: Սա հիմնականում պայմանավորված է գյուղացիական տնտեսությունների և գյուղատնտեսությամբ զբաղվող տարբեր առևտրային կազմակերպությունների ցածր եկամտաբերությամբ, առևտրային բանկերի և տարբեր ֆինանսական հաստատությունների կողմից առաջարկվող ֆինանսական միջոցների ոչ նպաստավոր պայմաններով: Հետևաբար կարծում ենք, որ գյուղատնտեսության վարկավորումը պետք է իրականացվի հիմնականում տարբեր միջազգային կազմակերպությունների հատուկ ծրագրերի շրջանակներում կամ անպայմանորեն կարգավորվի պետական միջամտությամբ: